Համայնքի ղեկավարի որոշումներ

13 սեպտեմբերի 2012 թվականի N 168-Ա13/09/12

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» սեպտեմբերի 2012 թվականի N 168-Ա

ՄԱՆՈՒՇԱԿ ՄԱՐԱՏԻ ՓԻԼՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 87 տան բնակիչ Մանուշակ Մարատի Փիլոյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ ամուսնու քույրը՝ Եսիգո Գուրգենի Պրոյանը երկարատև ծանր հիվանդությունից հետո մահացել է, ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Մանուշակ Փիլոյանը դիմել է գյուղապետարան' ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին, բյուջեի համապատասխան հոդվածից Մանուշակ Մարատի Փիլոյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն' 20 000 (քսան հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ' ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

20 12 թ. սեպտեմբերի 13
գ. Ջրվեժ